ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

27 դեկտեմբերի 2024 թվականի թիվ 105-Ա

ք. Երևան

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 3-Ի «ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի ԹԻՎ 18-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 1-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն և ՀՀ Կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 737-Ն որոշումները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց.***

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2022 թվականի հունվարի 3-ի «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կառուցվածքը հաստատելու և հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 30-ի թիվ 18-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1-Ա որոշմամբ հաստատված հավելվածում (այսուհետ՝ Հավելված)՝

1. Հավելվածի 9-րդ տողի «Փորձագետ» (Հաստիքային միավորների քանակը՝ 2) հաստիքը անվանափոխել «Մասնագետ՝ այլ քաղաքացիական աշխատանքների» (Հաստիքային միավորների քանակը՝ 2) հաստիքի:
2. Հավելվածի 38-րդ տողի «Վարորդ»՝ 3 հաստիքային միավորների քանակը փոխել 2 հաստիքային միավորների քանակով, իսկ «Վարորդ»՝ 1 հաստիքային միավորը անվանափոխել «Տեխնիկ» (Հաստիքային միավորների քանակը՝ 1) հաստիքի:
3. Հավելվածում՝ Գործերի կառավարչություն բաժնում ավելացնել 41-րդ տողը՝ «Տեխնիկ» (Հաստիքային միավորների քանակը՝ 1) հաստիքը:
4. Հավելվածի 41-րդ և 42-րդ տողերը փոխարինել՝ 42-րդ և 43-րդ տողերով:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2024 թ. դեկտեմբերի 27
ք. Երևան